վերաբերում է բանադրանքին, վատ քահանան չի կարող արգիլել պատուաւոր քրիստոնեաներին հաղորդակցութիւն ունենալ բոլոր մարդկանց Փրկչի հետ եւ որ, վերջապէս, կասկածից դուրս է, որ իրենց պարիսարքը՝ վերցնելով վրաներից բանադրանքը՝ արեւելքից կ'ուղարկէ շատ վարդապետներ, որոնք կը միանան իրենց Տրիէստում նոր վանք հիմնելու համար:

«Ես ոչինչ չգտայ առարկելու նման դատողութեանց, բայց մի ուրիշ անգամ հարցրի, թէ ի՞նչ պայման են դնում իրենց առաջուան վանահօր, որ վերադառնան Վենետիկ:

«Վարդապետներից ամենէն խելահասը ինձ պատասխանեց, թէ առաջին պայմանը այն պահանջն է, որ վանահայրը յետ առնէ մարկիզ Սեղբոսից այդ 400,000 ոսկին, որ փոխ է տուել նրան չորս տոկոսով:

«Այդ 400,000 ոսկին կազմում է հիմնական դրամագլուխը Ս. Ղազար վանքի, ուր Սուրբ Բարսեղի կարգին պատկանող հայ վարդապետները հաստատուել են հարիւրաւոր տարի առաջ:

«Այդ դրամագլուխը կազմուած է ազգի ջանքերով, եւ վանահայրը իրաւունք չունի նրա վերաբերմամբ կարգադրութիւն անել նոյնիսկ միաբանների մեծ մասի համաձայնութեամբ: Եթէ պատահի որ մարկիզ Սեղբոսը իրեն սնանկ յայտարարի, վանքը կը մնայ առանց միջոցի: Եւ ճշմարտութիւն է, որ վանահայրը այդ կարեւոր դրամագլուխը փոխ է տուել իր անձնական քմահաճոյքով:

«Մարկիզ դէ Սեղբոսը հայ վաճառական է, որ ապրում է Վենետիկում, ուր նա թանկագին քարերի խոշոր առեւտուր է անում եւ վանահօր մտերիմ բարեկամն է:

«Ապա ես իմ հայրերին հարցրի, թէ ուրիշ ի՞նչ պայմաններ ունին. նրանք ինձ ասացին, թէ միւս պայմանները վերաբերւում են վանական կարգապահութեան եւ հեշտութեամբ կը կարգադրուին: Նրանք աւելացրին, որ գրաւոր կերպով էլ կը տան իրենց պահանջները, հէնց որ ես ի վիճակի լինիմ վստահացնելու, որ Սեղբոսն այլեւս իր ձեռքում չունի իրենց դրամը:

«Այսպէս սկսուեց իմ աշխատանքը այս գործում: Ես գրի առի այս ամէնը եւ զեկուցումս ուղարկեցի Ինկուիզիտորների առեանին:

Վեց շաբաթ յետոյ ստացայ պատասխան, թէ վանահայրը հնարաւորութիւն կը գտնէ դրամատուն դնելու յիշեալ գումարը, բայց նախօրօք ուզում է մանրամասնօրէն իմանալ, թէ որո՞նք են պահանջուած կարգապահական բարեփոխութիւնները:

«Երբ ես կարդացի այս պայմանը, որ տրամադիրքն հակասում էր իմ դրածին, վճռեցի հրաժարուել այդ գործից: Բայց այն, որ ինձ հարկադրեց փութացնել հրաժարականս, այն մի քանի խօսքերն էին, որ ինձ ասաց կոմս Վագենբերգը: Նա ինձ հասկացրեց, թէ ինքը տեղեակ է, որ ես չորս հայ վարդապետներին ուզում եմ հաշտեցնել իրենց վանահօր հետ եւ որ այդ պարագան իրեն համար հաճելի չէ. «Որովհետեւ, ասաց նա, դուք այդ ձեռնարկում չէք կարող յաջողութիւն ունենալ առանց անախորժութիւն պատճառելու այն երկրին, ուր գտնուում էք եւ որին պէտք է լինէք բարեկամ, որովհետեւ ձեզ այստեղ համարում են բարեկամ եւ որպէս բարեկամի հետ էլ վարւում են»:

«Ես չդժուարացայ պատմել նրան ամբողջ գործը՝ հաւատացնելով նրան, որ երբեք չէի ստանձնի այդ յանձնարարութիւնը, եթէ ներքնապէս համոզուած չլինէի, թէ չպիտի յաջողուի, որովհետեւ ես տեղեկութիւն էի ստացել հէնց Վենետիկից եւ աներկբայելի ձեւով, որ մարկիզ դէ Սեղբոսը բոլորովին ի վիճակի չէ վերադարձնելու վանահօրից ստացած 400,000 ոսկին:

«Այս բացատրութիւնը բոլորովին ցրեց կոմսի դժգոհութիւնը:

«Հայերը 30,000 ֆլորինով գնեցին խորհրդական Ռիցցիի տունը, որտեղ եւ բնակուեցին, ուր ես էլ ժամանակ առ ժամանակ այցելում էի նրանց՝ առանց այլեւս Վենետիկի մասին խօսք բանալու»:

Այսպէս է պատմում իր յուշերում Կաղանովան դէպքերը եւ այդ դէպքերի մէջ իր խաղացած դերի մասին: Այստեղ կան որոշ ակնարկներ ճշմարտութեան, բայց, ի հարկէ, բնաւ ոչ ամբողջ ճշմարտութիւնը:

* * *

Ինչպէս Կաղանովայի յուշերի բոլոր դէպքերը, այս եւս ենթարկուեց մանրաղնին ըստուգման եւ հաստատուեց նրա իրական բնոյ-